

Տ. ԿԱՐԱՊԵՏ ՔԱՀԱՆԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

(ավազանի անունը՝ Հարություն)

Ծնվել է 1973 թ. մայիսի 4-ին, Էջմիածին քաղաքում:

1990 թ. ավարտել է Էջմիածնի Ռ. Պատկանյանի անվան միջնակարգ դպրոցը:

1990-96 թթ. ուսանել և ավարտել է Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցը:

1996-97 թթ. ավարտել է Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանի Զ լսարանը:

1993 թ. դեկտեմբերի 25-ին, Ս. Ստեփանոսի տոնին, ձեռամբ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է սարկավագ: Գրել է ավարտաճառ՝ «Հովսեփ արքեպս. Արղությանը և հայ ազատագրական շարժումը» թեմայով:

1997 թ. ծառայության է անցել Ք.Դ.Ք.Կ.-ի հրատարակչական բաժնում:

1998 թ. մարտի 1-ից ծառայել է Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդարանում որպես գործավար:

1998 թ. օգոստոսի 30-ին Մայր Տաճարում, ձեռամբ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի, ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա: